ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/12»

ք. Երևան «22» օգոստոս 2018 թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ի դեմս *գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի*, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷՄ ԷՔՍ ՊՐՈՍԵՐՎ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Աշոտ Շահնազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 218 250 (երկու հարյուր տասնութ հազար երկու հարուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 /տասը/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	«ԷՄ ԷՔՍ ՊՐՈՍԵՐՎ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ.23/5
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ	Բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
Հ\Հ 1635180012543	Հ\Հ 1930044793100100
ՀՎՀՀ 02602449	ՀՎՀՀ 01249718
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն՝
_____ Ա.Աբրահամյան (ստորագրություն)	_____ Ա. Շահնազարյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 22 » օգոստոս 2018 թ. կնքված
N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/12» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիր	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը
1	32551190	Ցանցային հեռախոս DPH-400SE	Ներկայացվում է ստորև	հատ	43 650	218 250	5

Ինտերֆեյս
- 1 WAN 10/100BASE-TX պորտ ինտերնետին միանալու համար
- 1 LAN 10/100BASE-TX պորտ համակարգչին միանալու համար
- RJ-11 (EXT) միակցիչ ընդլայնման մոդուլի միացման համար
- RJ-9 միակցիչ ականջակալների միացման համար
- 1 RJ-9 միակցիչով պորտ հեռախոսի միացման համար

Ազդանշանային, մեդիա և ցանցային արձանագրություններ
- SIP RFC 3261
- SIP RFC 2327
- RTP RFC 1889
- IP հասցեի նշանակում՝կայուն IP հասցե, DHCP եւ PPPoE
- STUN, կայուն պորտի արտապատկերում (NAT-T-ի համար)
- SNTP
- DNS և DNS SRV Auto Provision (ավտոմատ տրամադրում) գործառույթի համար
- TFTP/FTP/HTTP
- IP/TCP/UDP/ARP/ICMP
- Երթուղիչ եւ կամուրջ ռեժիմներ

Ձայնի կոդավորիչներ
- G.711a/u (64 կբիթ/վ)
- G.729A/B (8 կբիթ/վ)
- G.723.1
- G.722
- G.726-32

Ընդլայնված առանձնահատկություններ
- Դադարների ընկճում
- Արձագանքի ակուստիկ ընկճում (G.167)
- Ականջակալները RJ-9 միակցիչով միացնելու հնարավորություն
- Ձայնային ակտիվություն հայտնաբերում (VAD)
- Հարմարավետ աղմուկի գեներացում
- Jitter-բուֆեր
- DTMF հաղորդիչ (SIP info, Transparent, RFC 2833)
- Փաթեթի կորստի քողարկում (PLC)

Ստեղնաշար
- նվազագույնը 4 ծրագրավորվող ստեղներ՝ որոշ գործառույթներ կատարելու համար
- 5 ստեղներով SIP գիծ
- MWI
- Ականջակալներ
- RLS (Release Key)
- Զանգը սպասեցնելը (Hold)

Հեռախոսի գործառույթներ
- Բազմաթիվ օգտատերեր (նվազագույնը 5 գրանցված SIP հաշիվ)
- Բաժանորդի ID-ի ավտոմատ որոշում
- Զանգերի արխիվ, 100 բաց թողնված զանգ, 100 մուտքային զանգ, 100 ելքային զանգ
- Հեռախոսագիրք (մինչև 500 կոնտակտային տվյալներ և հեռախոսահամար)
- Հեռահար հեռախոսագիրք (մինչև 4 հեռախոսագիրք xml ֆորմատով)
- Ամսաթվի /ժամի ցուցադրում
- Հեռախոսազանգի ժամաչափի ցուցադրում
- Զանգի 11 հնչերանգի ընտրություն (9 հնչերանգ եւ 3 մեղեդի)
- 9 հեռախոսահամար արագ հավաքելու հնարավորություն
- Մուտքային զանգի ցուցիչ
- Flexable dial map (ճկուն համարարկման քարտեզ)
- Գաղտնաբառով պաշտպանություն՝ կարգավորումների ինտերֆեյս մուտք գործելիս
- Pre-dial before sending
- Ստեղների ընդլայնման մոդուլը միացնելու հնարավորություն
- MWI
- SMS
- Ստեղնախմբի կողպեք
- Ահազանգ

Զանգի գործառույթներ
- Call Hold Resume
- Ձայնի անջատում
- Զանգի փոխանցում (ուղեկցությամբ կամ առանց ուղեկցության)
- Զանգի վերահասցեավորում (զբաղված է, չի պատասխանում, ոչ պայմանական)
- Զանգը սպասեցնելը
- Սպասող զանգի ցուցիչ
- Եռակողմ խորհրդակցություն
- Անանուն զանգ/ Մերժում
- Հաղորդագրության ցուցիչ
- Գործառույթ «Զանհանգստացնել»
- Ավտոմատ պատասխանիչ
- Սև ցուցակ
- Սահմանային թույլատրելի ցուցակ
- Հեռախոսազանգը ավտոմատ անջատելը (auto hangup)
- Հեռախոսահամարի ավտոմատ հավաքում
- Որոշակի ելքային զանգերի արգելք
- Թեժ գիծ
- Զանգը գողանալը (Call Pickup)
- Action url/Active uri

• Վերահասցեավորում (Transfer) • Խորհրդակցություն (CONF) • Հեռախոսագիրք • Զանգերի Պատմություն (History) • Redial (Վերազանգելու և ձայնագրելու հնարավորություն՝դեպի զանգերի արխիվ մուտքի համար, հեռախոսահամար հավաքելու ավարտ և զանգի ավարտ) • Բարձրախոս (Speaker) • 4 նավիգացիոն ստեղներ կարգավորումներն իրականացնելու համար(զանգի, բարձրախոսի եւ լսափողի բարձրության մակարդակի կարգավորում) • Enter (հաստատման կոճակ) • 12 թվային ստեղներ, ներառյալ * եւ # ստեղները • Ձայնի անջատում (Mute) • Բարձրության մակարդակի կարգավորում (Vol-/Vol+) **Հոսանքի լարումը** • Մտնում է 100 - 120, 220 - 240 Վոլտ • Դուրս գալիս 5 Վոլտ մշտական հոսանք, 1A **Էներգիայի ծախսը** • Բնորոշ 2.5 Վատտ՝ «սպասման» ռեժիմում • Առավելագույնը 2.8 Վատտ՝ աշխատանքի ժամանակ	**Կապի գործառույթներ** • QOS: IEEE 802.1p և IEEE 802.1Q • Diffserv (DSCP)/ToS • Ամբողջական միջակայքի աջակցություն VLAN ID • Class of Service Support by VLAN Tag • LLDP • L2TP VPN • OpenVPN (Ուշադրություն, այս գործառույթը բացակայում է այն սարքերի մեջ, որոնք ներմուծվում են մաքսային միության երկրներ) **Օգտատիրոջ ինտերֆեյս/ ցանցի կառավարում** • Օգտվողի ինտերֆեյսի էկրանը/ստեղնաշարը ինչպես անգլերեն, այնպես էլ այլ լեզուներով • Օգտատիրոջ Web-ի վրա հիմնված ինտերֆեյս (HTTP) ինչպես անգլերեն, այնպես էլ այլ լեզուներով • Ծրագրային ապահովման հեռահար թարմացում FTP / TFTP / HTTP –ի միջոցով • APS auto-provisionning՝ծրագրային ապահովման թարմացման և պրոֆիլի համար • Թարմացում՝ firmware-ի (ներկառուցված չվանվող հիշողություն) վնասման դեպքում **Չափը՝** Առնվազն 240x185x45 մմ **Քաշը՝**0.99 կգ **Օպերացիոն ջերմաստիճանը՝**0 ° -ից 40 ° C **Պահպանման ջերմաստիճանը՝** -20° -ից 60 ° C **Օպերացիոն խոնավությունը՝** 10- ից 65% առանց կոնդենսատի **Խոնավությունը պահպանման դեպքում՝**15- ից 85% առանց կոնդենսատի **Հավաստագրեր՝**CE B դասի

Պարտադիր պայմաններ.

✓ Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

✓ Երաշխիքային ժամկետ՝ 2 տարի: Երաշխիքային ժամկետի ընթացքում ապրանքի փոխարինումը կատարվելու է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

✓ Բոլոր սարքավորումների համար պետք է տրամադրվի արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF):

✓ Արտադրողի կողմից սպասարկման կենտրոնի առկայություն:

✓ Ապրանքների մատակարարումը կատարվելու է պայմանագրի կնքումից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում՝ մատակարարի կողմից ք. Երևան, Կ.Ուլնեցի 68 հասցեով:

ԳՆՈՐԴ

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական
և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
ՀՀ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝

_____ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)

M.P.

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՄ ԷՔՍ ՊՐՈՍԵՐՎ» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ.23/5
Բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
ՀՀ 1930044793100100
ՀՎՀՀ 01249718

Տնօրեն՝

_____ Ա. Շահնազարյան
(ստորագրություն)

«ԷՄ ԷՔՍ ՊՐՈՍԵՐՎ»
«M X PROSERV»
01249718

Հավելված N 2
«22» օգոստոս 2018 թ. կնքված
N «ՆՄՇՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-18/12» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	32551190	Ցանցային հեռախոս DPH-400SE	-	-	-	-	-	-	-	-	218 250	218 250	218 250	218 250	218 250

*Վճարումը կատարվելու է ըստ հանձնման-ընդունման արձանագրության, ապրանքների մատակարարումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:
**Վճարման ենթակա գումարները նշված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական
և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուկնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
ՀՀ 1635180012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝
_____ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՄ ԷՔՍ ՊՐՈՍԵՐՎ» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ.23/5
Բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
ՀՀ 1930044793100100
ՀՎՀՀ 01249718
Տնօրեն՝
_____ Ա. Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.
«ԷՄ ԷՔՍ ՊՐՈՍԵՐՎ»
«M X PROSERV»
01249718